ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունիսի 2013թ. թիվ 108-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ ՇՏԱԲԱՅԻՆ
ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. հունվարի 30-ի թիվ 134-Ն որոշմամբ հաստատված «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգի» 5-րդ կետի և ՀՀ Լոռու մարզպետի կողմից 25.01.2013թ. թիվ 9-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2013 թվականի հիմնական միջոցառումների պլանի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ու մ ե մ.

1. 2013 թվականի օգոստոս ամսվա ընթացքում Լոռու մարզի Շամլուղ, Մեծ Այրում, Արևածագ, Ճոճկան, Մղարթ, Ագարակ, Ամրակից, Կուրթան, Կողես, Հոբարձի և Սվերդլով համայնքներում անցկացնել շտաբային ուսումնավարժություններ «Գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների օջախի վերացում» թեմայով:

2. Ուսումնավարժությունների կազմակերպման և արդյունավետ անցկացման նպատակով սահմանել ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման ժամանակացույց՝ համաձայն հավելվածի:

3. Ուսումնավարժությունների ղեկավարներ նշանակել համապատասխան համայնքների ղեկավարներին:

4. Ուսումնավարժությունների անցկացման հսկողությունը դնել Լոռու մարզային փրկարարական վարչության պետի վրա:

5. Լոռու մարզային փրկարարական վարչության պետին՝

Սույն որոշումը տրամադրել վերը նշված համայնքների ղեկավարներին, նրանց ցուցաբերել գործնական և մեթոդական օգնություն շտաբային ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման գործում:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ

2013թ. հունիսի 28
ք.Վանաձոր